ՆԱԽԱԳԻԾ

ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

«__»_____ 2014թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը՝ ի դեմս նախարար Գ.Բեգլարյանի և Իրանի Իսլամական Հանրապետության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը՝ ի դեմս նախարար _____, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով երկու երկրների միջև առկա բարեկամական հարաբերությունները ինչպես նաև կապի, ինտերնետի և տեղեկատվական տեխնոլոգիաների դերը պետությունների զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության մշակութային, կրթական, սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական տեղեկատվության մատչելիության գործում,

նպատակ ունենալով ամրապնդել Նախարարությունների միջև համագործակցությունը,

ցանկանալով համագործակցել կապի, ինտերնետի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում առկա խնդիրների լուծման, ինտերնետ տրաֆիկի փոխանցման, գիտատեխնոլոգիական ոլորտում տեղեկատվության տրամադրման հարցերում:

Կողմերը համաձայնեցին համագործակցել հետևյալ ուղղություններով.

1. Կողմերի միջև առկա կապուղիների միջոցով երրորդ երկրին միջազգային <<ԱՅՓԻ» (IP) տարանցման ծառայությունների մատուցման հնարավորության ապահովման.
2. Կողմերի միջև երկկողմ միջազգային <<ԱՅՓԻ>> (IP) տարանցման ապահովում և թողունակության անսահմանափակ հնարավորության ստեղծում,
3. ՏՀՏ ոլորտում համատեղ հետազոտությունների իրականացում և ծրագրերի մշակում՝ ներառյալ հետազոտության արդյունքների և դրանց առընչվող տեղեկատվության փոխանակում:
4. ՏՀՏ ոլորտի մասնագետների և փորձի փոխանակման, հնարավորություն ընձեռող համատեղ ծրագրերի մշակում,
5. տեղական և տարածաշրջանային ինտերնետ փոխանակման կետերի և տվյալների կենտրոնների ստեղծում

6. Կողմերի աշխարհագրական դիրքի առավել արդյունավետ օգտագործմամբ՝ մալուխային ցանցի ստեղծում:

7. սույն Հուշագրով սահմանված համագործակցության իրավական և կազմակերպչական ուղղություններին շրջանակներում անհրաժեշտ այլ տեղեկատվության տրամադրում և (կամ) փոխանակում:

8. Յուրաքանչյուր տարվա համար Կողմերը կարող են հաստատել նաև թիրախային (հասցեական) աշխատանքային ծրագրեր.

Սույն Հուշագրի դրույթների իրագործման համար Կողմերը կարող են ստեղծել աշխատանքային խմբեր, կազմակերպել համատեղ խորհրդակցություններ, աշխատանքային հանդիպումներ, քննարկումներ, համատեղ թեմատիկ սեմինարներ:

Սույն Հուշագրի գործողության շրջանակներում իրականացվող հանդիպումների օրակարգը, վայրը, օրերը և այլ հարցերը, կարգավորվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Սույն հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություն կողմերից որևէ մեկի համար:

Կողմերը ապահովում են ստացված տեղեկատվության գաղտնիությունը՝ համաձայն յուրաքանչյուր Կողմի երկրում գործող օրենսդրության պահանջների:

Սույն հուշագրի դրույթների իրականացման նպատակով կողմերը կարող են կնքել համաձայնագրեր:

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից և կնքվում է անորոշ ժամկետով:

Սույն Հուշագիրը կատարված է ---------- 2014 թ. ----------, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, պարսկերեն և անգլերեն լեզուներով. բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն հուշագրի դրույթների մեկնաբանման ընթացքում տարաձայնություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն լեզվով տարբերակին:

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարար

Իրանի Իսլամական Հանրապետության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար